

ԳՈՒՐԳԵՆ ԳՎԼՍՅԱՆ

ԴԻՏՄԱՍԲ ՉԵՄ ԽՆԱՅՈՒՄ

(Հունորեսկ)

Հասկացող մարդիկ դեռ հին դարերում թանկ են գնահատել իրենց ժամանակը: Նրանք գլուխ են կոտրել, թե ինչ անեն, որ իզուր չանցնի յուրաքանչյուր րոպեն: Հիմա էլ հասկացող մարդիկ կան, որոնք նույն վերաբերմունքն ունեն ժամանակի նկատմամբ: Իսկ շատերն առաջնորդվում են «ժամանակը ոսկի» է թևավոր խոսքով: Եվ չեն սխալվում: Թող ինձնից ոչ ոք չնեղանա, եթե հայտարարեմ, որ հավանում եմ հասկացողներին: Նրանք հոգեհարազատ են ինձ: Քանի որ, համեստորեն խոստովանեմ. ես էլ եմ հասկացող: Դեռ ավելին՝ ես խելացի եմ ու գիտակից: Եվ սկզբունքորեն հարգում եմ նրանց, ովքեր հորդորում են բոլորին՝ խնայել ոչ միայն ժամանակը, այլև հողը, ջուրը, էլեկտրականությունը և նույնիսկ՝ նյարդերը...

Հիմնականում համաձայն լինելով վերոհիշյալ թևավոր խոսքով առաջնորդվողների հետ, այնուամենայնիվ, ուզում եմ իմ հատուկ կարծիքը հայտնել այդ առթիվ: Դե, մեզանում հաստատված է ժողովրդավարություն, դեմոկրատիա, և տեղից վերկացողը ցանկացած հարցի վերաբերյալ հրապարակայնորեն հայտնել իր կարծիքը: Մի խոսքով, բազմակարծություն է: Իհարկե, ոմանք, անգամ՝ հասկացողները, կարող են սխալվել: Թեև Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում այս մասին հողված չկա, բայց, պարզ է, մեզանից յուրաքանչյուրը սխալ կարծիք հայտնելու իրավունք ունի: Եվ այդ հրաշագեղ իրավունքը իրացնելու հարցում ազատ է: Ինչպես՝ երկնքում թևածող ծիտիկը:

Այնպես որ մի զարմացեք, եթե հենց հիմա առանց աչք թարթելու հայտարարեմ, որ ժամանակի վերաբերյալ ունեցած իմ կարծիքը բավականին տարբերվում է հին դարերի և մեր դարի հասկացողների կարծիքից: Այո, ես չեմ խնայում իմ ժամանակը: Դիտմամբ: Եվ խորհուրդ եմ տալիս՝ իզուր մի թոթվեք ձեր լայն ուսերը, թե սա ինչ բան է: Գիտեմ՝ կարող եք ձեր հայկական քթի տակ նույնիսկ քրթմնջալ՝ «այ քեզ հիմարություն»: Եթե նույնիսկ ես իսկապես հիմարություն եմ դուրս տալիս, ոչինչ, մինչև վերջ հետևեք խոսքիս: Հիմարություն դուրս տալը միայն միտինգային քաղաքական առաջնորդների մենաշնորհը չէ: Սա՝ հաստատ:

Բոլոր դեպքերում, ավելի լավ կլինի, եթե նյարդային շարժումներ չանեք և համբերությամբ շարունակեք կարդալ: Վերջապես մենք պիտի սովորենք ոչ միայն հիմարություն դուրս տալ, այլև հանգիստ լսել ուրիշների հիմարությունները:

Մինչդեռ մեզանում ոչ բոլորն են պահպանում այս սքանչելի կանոնը: Իսկ սա, թող ոչ ոք ինձնից չնեղանա, ոչ միայն կենցաղային, այլև քաղաքական կուլտուրայի պակասի հետևանք է:

Սակայն հասկացող ընթերցողիս ժամանակը խնայելով, վերադառնամ բուն թեմային: Այդ պատճառով ստիպված եմ կրկնել, որ ժամանակը ոսկի լինելու թևավոր խոսքը ինձ պես մարդկանց չի վերաբերում: Մանավանդ՝ մեր օրերի կտրվածքով: Ինձ համար ժամանակը մեր զարգացման ներկա փուլում ոչ միայն ոսկի, այլև ալյումին և անգամ ժանգոտ երկաթ չէ: Այսինքն, համարյա արժեք չունի...

Չե, ես իսկապես ապուշ չեմ: Պարզապես կյանքս դեռ մի բանի նման չէ: Վատ եմ ապրում: Մի խոսքով, ես մեկն եմ նրանցից, որոնց կենսամակարդակով մտահոգված է Հանրապետության նախագահը: Եվ ոչ միայն նա, այլև, հավանաբար, իշխանության բոլոր էշելոնները ներկայացողները...

Մինչդեռ լավ ապրողները (տա Աստված, որ սրանց թիվը գնալով շատանա) ժամանակի պակաս են զգում: Մեկ էլ՝ շատ փող ունեցողները: Դե, նրանց ամեն ժամը դրամ է բերում: Իսկ դրամը տարադրամ է՝ դոլար, եվրո, ռուբլի... Հազար ու մի բան: Եվ ժամանակի կորուստը փողի, կապիտալի կորուստ է: Հաճույքի կորուստ՝ նույնպես: Եվ բնականաբար, նրանք կուզենային, որ օրը կազմված չլիներ ընդամենը քսանչորս ժամից: Նրանց դա քիչ է: Լավ ապրողները դեմ չեն, որ օրը կազմված լիներ, ասենք քսանհինգ, քսանվեց և նույնիսկ երեսունվեց ժամից...

Հիմա, երևի, սպասում ենք, որ պիտի սկսեմ նվնվալ, դժգոհել կյանքից, ճակատագրից, կոռուպացված չինովնիկներից, եղանակից, թե ախպեր, ինչու ինձ պես մարդը, որ միայն չափավոր հիմարություններ է դուրս տալիս,, պիտի լավ չապրի: Ոչ, ես որոշ քաղաքական գործիչների պես, խիղճս չեմ կորցնի ու ամեն տիպի դեպքի, երևույթի համար ցուցամատս «վերևները» չեմ պարզի: չնայած իրավունք ունեմ սպասելու, որ ես և նույնիսկ ինձանից հիմարները, ապագային թափփուկները, միհիլիստները մարդավարի ապրելու իրավունք ունեն: Այդ դեպքում աղմուկը, հարայիրոցը քիչ կլինի, միտինգներ, լաչառություն չեն լինի, բոլորը կգնան կինո, սրճարան, իսկ ամենածույլերը կմնան տանը, խորոված կանեն բակում՝ ծխով ու ճենճահոտով կապականեն մեր գեղեցիկ երկրի օդային ավազանը...

Չկարծեք, նաև, թե ես ոմանց նման սպասում եմ ու պահանջում, որ Հանրապետության նախագահը իր թիկնապահների ուղեկցությամբ, Վարչապետը՝ իր թիկնապահների ուղեկցությամբ և մյուս իշխանավորները կախարդական սկուտեղով մեր տուն կբերեն ամենը, ինչ հարկավոր է մարդավարի ապրելու

համար: Պարզապես ուզում եմ, որ իմ հարազատ երկրում ամեն տեսակ բարեփոխումները տան իրենց արդյունքը, մեր պետական բյուջեն, եթե չհավասարվի Գերմանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի ունեցածին, ապա համեմատելի լինի, ասենք, պատլիկ Բելգիայի, Յուլանդիայի, Դանիայի բյուջեների հետ: Իհարկե՝ առանձին-առանձին վերցրած: Ի դեպ, սկզբի համար ինձ կգոհացնի Լյուքսեմբուրգի բյուջեն, իսկ այս հերցոգության տարածքը հավասար է մեր Շիրակի մարզին...

Հասկանում եմ, դրա համար ժամանակ է հարկավոր: Այսինքն, պիտի տարիները շուտ անցնեն: Այդ պատճառով էլ ես չեմ խնայում իմ թոպեները, ժամերը, օրերը, ամիսները... Ուզում եմ՝ դրանք արագ անցնեն: Իսկ դրա համար շռայլորեն քռռուփուչ եմ անում ժամանակս, վատնում դատարկ-մատարկ խոսակցությունների վրա: Եվ երբեմն էլ նստում եմ այսպիսի բաներ մտածում:

Ճիշտ եմ անում, թե՛ ոչ, դա իմ անձնական գործն է: Ես իմ ժամանակի տերն եմ: Եվ իմ ժամանակն եմ վատնում, և ոչ թե ուրիշի...